



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

6491

Zyngn

Zyngn of  
Johnson Green

4. June 1876

84

2-66



20 APR 2006

18 NOV 2011

ՎԻԿՏՈՐ ՀԻԻԿՕՅ

84

2-66

48

# ԻՄՊԵՌ ԿԱԼԼՈՒԱ



ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԱԼԻՊՍԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

ԵԻՒՍՈՒՓԵԱՆ ԻԱՆ ԹԻԻ 17

1876



Մի օր Գուրեանի հառաջանքներն ինն արտասուել կու տային . ի՞նչ տխրութիւն կ'զգայի երբ կը մտածէի թէ այդ տառապեալ հոգին կը հեծեր հողի կանրեղի մ' առկայծ լուսովը : Քարինէ՛ր արդեօք , կ'ըսէի , մահուան անկողնոյն մէջ մեռ. քերնին ճակտերնուն կը դնեն եւ կը մեռնին ըսելով . « Եւ սակայն մի բան կար հոս » : Այս մտածմանց մէջ էի երբ Հիւկօյի երիտասարդ օրերու գրածներն ընդունեցայ բարեկամէ մը . կը թերթի գանոնք երբ ԻՄՊԵՌ ԿՍԼԼՈՒՍ անունը գարկաւ աջքիս , սկսայ կարդալ , երբ լնցուցի շատ տխուր էի : Գրեթէ կէս դար առաջ Ֆռանսայի մէջ Հիւկօ , երջանիկ բանաստեղծը գոզցես մեր արդի երիտասարդ հանճարներն նկարագրած էր , ոչք «անտես եւ անյայտ կը հեծեն , կը տառապին եւ կը մարին . . . » :

Այս մեղամաղձիկ տողերն բարգմանեցի . թերեւս Հայ Իմպեր Կարոսաներ սփովանք մը գտնեն մտածելով թէ Ֆռանսայի մէջ իսկ , իրենց տխուր բաղդակիցներ կան :

# ԻՄՊԵՐ ԿԱԼԼՈՒՄ



5178  
38

Իմպեր Կալլուա՝ ժընէվցի մի աղքատ երիտասարդ էր, ծերունի գրագրի մը որդին կամ թոռը, եթէ չեմք սխալիր. աղքատ ժընէվցի մ'ը սինքը, լաւ կրթուած և ուսեալ, որ վեց տարի կայ (1) ֆարիշ եկաւ, ամսուան մը ապրուստ հազիւ ունենալով, բայց միշտ սա համոզմամբ՝ որով արդէն շատերն հրապուրուած են, թէ մրցման և բախտի կեդրոն մ'է ֆարիզ՝ ուր ո՛վ որ իւր ճակատագրին խաղը լաւ վարէ, կը շահի վերջապէս. օրհնեալ Մայր — քաղաք մը՝ ուր պատրաստ ապագայներ կան յորոց ամեն ոք կրնայ ընտրել և իրեն սեփհականել. աւետեաց երկիր մը՝ որ ամեն հանճարի առջեւ փառաւոր հորիզոններ կը պարզէ. քաղաքակրթութեան մի ընդարձակ արուեստանոց՝ ուր ամեն յաջողակ անձինք աշխատութիւն կը գտնեն և բախտերնին կը շինեն. վերջապէս Ո՛վկէան մը՝ ուր ամեն օր հրաշալի ձկնորսութիւնը կը կրկնուի. միով բանիւ, յաջողելու և սքանչելի գործունէութեան մի բնագաւառ՝ ուսկից բոկոտն մտնող տաղանդաւոր մարդը դեռ տարին չլրացած՝ կառքով դուրս կ'ելլէ:

(1) Վ. Հիւկօ 1833 ին գրած է զայս: (Ծ. Թ.)

1827 Հոկտեմբերի մէջ Փարիզ հասաւ նա : Կե-  
ռաւ թշուառութեամբ 1828 Հոկտեմբերին :

Չափազանցութիւն մը չեմք ընել : Այս երիտա-  
սարդը թշուառութեամբ մեռաւ 'ի Փարիզ : Չի կար-  
ծուի թէ այն հանճարեղ և մարդասէր անձանցմէ  
ոմանք՝ որոց Սրահայանքն անունը տալու սովոր եմք,  
չի կարծուի թէ խորհող և ուսեալ երիտասարդաց  
չատերն՝ որոց մէջ ինկաւ Փարիզ եկած միջոցին,  
անձանօթ ամենուն, իւր ձեռքը չի սեղմեցին, խոր-  
հուրդ տալով նմա և օգնութիւն, չի բացին իրենց  
քսակը երբ անօթի էր, իրենց սիրտը՝ երբ կ'ար-  
տասուէր : Ըսել հարկ չէ թէ ասոնցմէ շատերը՝  
տան վերջին վարձը և բժշկին պատուագիրն ընկե-  
րութեամբ վճարեցին, և թէ իւր դագաղը հիւսան  
չի պարտիր : Բայց ինչ, միթէ այս ամենն ալ թըշ-  
ուառութեամբ մեռնիլ ըսել չէ՞ :

Երբ Փարիզ հասաւ, վստահութեամբ ինքնին  
գնաց երեք կամ չորս անձանց ներկայացաւ : Իւր  
առաջին պատրանաց ատեն զինքն հիւրընկալող և  
վերջին անձուկ օրերուն մէջ իրեն օգնողներէն մին՝  
հետեւեալը կը պատմէր մեզ մօտերս :

« 1827 Հոկտեմբերի մէջ, ցրտագին առաւօտ  
մը երբ նախաճաշելու վրայ էի, դուռս բացուելով  
ներս մտաւ բարձրահասակ և սակաւ ինչ հակեալ  
երիտասարդ մը : Փայլուն աչերով, մազերը սեւ, այ-  
տերը կարմրորակ. ձերմակ ու բաւական նոր էր  
իւր լողիկը, գլխարկը մաշած : Ոտքի ելայ և նստե-  
ցուցի զինքը : Վարանեալ մի քանի շփոթ խօսքեր  
արասասանց, որոց մէջն որոշակի երեք բառ միայն

կրցայ հասկնալ. Ի՞նչե՞ր կալուստ, Ժընէվ, Փարիզ :  
Գիտցայ թէ ասոնցմով կ'ուզէր իմացընել իւր ա-  
նունը, այն վայրն՝ ուր տղայութիւնն անցուցած էր,  
և այն վայրն՝ ուր կ'ուզէր մտրդ ըլլալ : Ինձ բա-  
նաստեղծութեան վրայ խօսեցաւ : Թեւին տակ  
թղթի ծրար մ' ունէր : Լաւ ընդունելութիւն մ' ը-  
րի : Միայն կը դիտէի որ սաքերը ամօտին տակ  
պահել կը ջանար անհկոտ կերպով : Քիչ մը կը հու-  
զար : Հետեւեալ օրը որ սաստիկ կ'անձրեւէր, ե-  
րիտասարդը դարձեալ եկաւ : Երեք ժամ քովս  
կեցաւ : Զուարթ էր և երջանիկ կը թուէր : Անկի-  
ացի քերթողաց վրայօք խօսեցաւ ինձ, որոց վրայ  
չատ ծանօթութիւն չունիմ բաց 'ի Շէյքսպիրու և Պայ-  
ունէն : Շատ կը հաղար : Ոտքերը ամօտին տակ կը  
պահէր շարունակ : Երեք ժամն յետոյ նշմարեցի  
թէ կօշիկները ծակ և ջուր առած էին : Չի համար-  
ձակեցայ բան մը ըսել իրեն : Այսպէս ելաւ գնաց  
քովէս՝ Անկիացի բանաստեղծներէն 'ի զատ ուրիշ  
բանի վրայօք չի խօսելով : »

Գրեթէ այս կերպով ամեն գացած տեղերը ինք-  
զինքը ներկայացուց, այսինքն երեք կամ չորս ան-  
ձանց որք մասնաւորապէս արհեստի և բանաստեղ-  
ծութեան տուած էին ինքզինքնին : Ամեն տեղ լաւ  
ընդունելութիւն գտաւ, միշտ քաջալերուելով և  
երբեմն օժանդակուելով : Բայց այս ամենը իւր թըշ-  
ուառութեամբ մեռնելուն արդեւ չէղան, ինչպէս  
յիշեցինք արդէն :

Ինչ որ մասնաւորապէս իրեն վրայ կը նշմարուէր  
Փարիզ հասած առաջին ամիսները, բուռն և տեն-

դային հետաքրքրութիւն մ' էր : Կ'ուզէր տեսնել  
 գփարիզ, լսել գփարիզ, շնչել և շօշափել զայն : Բայց  
 ո՛չ այն փարիզը՝ որ քաղաքականութեան վրայ կը  
 խօսի , ֆօնֆիֆֆօնէլը կը կարդայ և Ազգային պահա-  
 պան գօրք կ'ըլլայ , ո՛չ այն փարիզը՝ որոյ վրայ հիա-  
 նալ կու գան անգործ գաւառացիներ , ո՛չ անոր  
 հոյակապ շէնքերը , Սէն—Սիւվիսը , Բանթօնը , և  
 ո՛չ իսկ թանգարանաց և գրատանց փարիզը : Ո՛չ ,  
 ի՛նչ որ ամենէն առաջ իւր ուշը գրաւած և հետա-  
 քրքրութիւնը շարժած էր , ի՛նչ որ կը զննէր , կը  
 հարցաքննէր , փարիզու մտածումն էր այն , անոր  
 գրական պաշտօնը , քաղաքակրթիչ պաշտօնը , վեր-  
 ջապէս փարիզու յառաջադիմութիւնը : Այս երի-  
 տասարդը կը քննէր 'ի փարիզ արհեստի նորանոր  
 զարգացումները : Ուր որ գրական կուսնի մը հըն-  
 շիւնը լսէր , հոն էր իսկոյն : Նոյն ժամայն կը պար-  
 զէր իւր գաղափարները և կը թողուր հաճութեամբ  
 որ վճճերու մրճին ներքեւ ողորկուին , և այսպէս  
 անդադար հարուածուելով , բոլորովին կերպարա-  
 նափոխ կ'ըլլային անոնք : Երկրորդական կարգի մը-  
 տաց համար վիճարանութեան վտանգաւոր ըլլալուն  
 ամենէն ակներեւ տպացոյցներէն մին է Իմպէռ Կալ-  
 լուա : Երբ մեռաւ , ալ և ո՛չ իսկ մի ուղիղ գաղա-  
 փար մնացած էր իւր ըզեզին մէջ :

Ինչ որ մասնաւորապէս իւր վրայ կը նշմարուէր  
 փարիզ անուցած վերջին ամիսները՝ ոյք իւր կե-  
 նաց ալ վերջին ամիսները եղան , խորին վշատու-  
 թիւն մ' էր : Այլ եւս ոչինչ կ'ուզէր տեսնել , ոչինչ  
 լսել , ոչինչ ընել : Քանի մ' ամսուան մէջ խեղճ  
 երիտասարդին հետաքրքրութիւնը յափրութեան

փոխուեցաւ : Խել մը հարցումներ կը ներկայանան  
 հոս , զորս կ'ընեմք առանց լուծելու : Իւր պատրանք-  
 ներէն ո՛յք փճացեր էին , ներքին թէ արտաքին  
 պատրանք : Այլ եւս իւր անձին չէր ուզեր հաւա-  
 տալ թէ աշխարհի : Փարիզը քննելէն յետոյ իւր ա-  
 չաց շատ մե՞ծ երեւցաւ այն թէ շատ փոքր : Ինք-  
 զինքն արդեօք խիստ տկար թէ յոյժ զօրաւոր դա-  
 տած էր ուրախ զուարթ գործի մը ձեռնարկելու  
 քաղաքակրթութեան այս մեծ արհեստանոցին մէջ :  
 Իւր իտէական կարողութիւնքը շատ բա՞րձր թէ շատ  
 ստորին երեւցան արդեօք , երբ անոնցմով ուզեց  
 վիճակի մը տէր ըլլալ կամ ասպարէզ մ' ընտրել :  
 Մէկ խօսքով , այն կամաւոր անգործութիւնը՝ որ  
 իւր մահը փութացուց , արհաւրի՞ մ' արդիւնքն էր  
 թէ արհամարհանաց : Չեմք զիտեր : Ճշմարիտը սա  
 է թէ փարիզը լաւ մը դիտելէն յետոյ , տխրութեամբ  
 ձեռքերը ծալելով ամեն բան մերժեց : Ծուլու-  
 թի՞ւն էր այս , հոգնութի՞ւն թէ ապուլութիւն : Ըստ  
 մեզ երեքն ալ միանգամայն : Ոչ փարիզու մէջ և ոչ  
 ինքն իր վրայ կրցած էր գտնել ինչ որ կ'որոնէր :  
 Երեւակայած փարիզը չի կար հոն : Յինքն տեսնել  
 կարծած մարդը գոյութիւն չէր առնուր : Երբ իւր  
 այս երկու երազներն ալ մարեցան , ինքզինքը մահ-  
 ուան յանձնեց :

Ինքզինքը մահուան յանձնեց կ'ըսեմք : Եւ յի-  
 րաւի , Ֆիզիքապէս , ինչպէս և բարոյապէս , իւր  
 մահը տեսակ մը անձնասպանութիւն եղաւ : Ներուի՞  
 մեզ եթէ այս մասին մեր մտածումը ըստ ամենայնի  
 չեմք բացատրեր : Սա կայ թէ աշխատիլ չուզեց :  
 Շատերն իրեն գործ գտած էին , ( իրաւ է թէ



սորմեկի՛ գործեր՝ որոց մէջ այնքան երիտասարդ մտքեր կը մաշին , բառգիրք , քաղուածոյք , կենսադրութիւնք ժամանակակցաց , մէկ սիւնակը քրտան ֆռանքի : Ատեն մը այս զանազան զբաղմանց մէջ քանի մը տող բան գրել ջանաց : Յետոյ սիրտը նուազեցաւ , ամեն բան մերժեց : Անյաղթելի ծուլութիւն մը տիրեց վրան , որպէս քունը՝ ձրենակոյտներու մէջ մոլորեալ ուղեւորին : Տղայութենէն ՚ի վեր ունեցած մէկ հիւանդութիւնն սկսաւ սաստկանալ : Ջերմն ալ վրայ հասաւ : Սյուպէս երկու եւրեք ամիս տանջուելով մեռաւ : Քսաներկու տարեկան էր :

Շիտակն ըսելով , իւր ընտրած երկիրը Անկլիա էր և ո՛չ Յուանաս : Իւր երագածը Ղօտրա էր և ո՛չ Փարիզ : Թողած տողերէն պիտի իմանամք զայս : Ահնաց վերջին ատենները , երբ ա՛լ վշտեր միտքը խանդարելու վրայ էին , երբ կիսաշէջ դաղափարներ տկար լոյս մը միայն կ'արձակէին իւր սպառեալ ըզեղին վրայ , երջանիկ ըլլալու առաջին պայմանը , կ'ըսէր — այլանդակ ցնորք — Անկէսոյ՞ ձեռն է : Անկլիա երթալ կ'ուզէր , հոն՝ Ղուտ , մեծ քերթող լինելու , հարստութիւն զիջելու համար : Եռանդեամբ Անկլիերէն կ'ուսանէր : Այս աշխատութեան միայն հաւատարիմ մնաց : Մահուան օրը , զգալով թէ պիտի մեռնէր , անկողնոյն վրայ մեծ քերակահոսութիւն մը կար , Անկլիերէնի ստորապսո՞ծ էր : Ի՞նչ կ'ուզէր ընել անով :

Իմպէռ Ասլուա մեռաւ տխուր , յուսահատ և բեկեալ , առանց սնարին քով վառաց նշոյլ մ' իսկ

ուեննալու : Ա՛րտէր թէ գրուիւնութեան այն բարիւնին՝ զոր գրափսճառք Ահնաքրակն Բառքէր կը կոչեն , մի քանի մթին խորշերը մրտածէ՛ր գաղտագողի : Աը յուսար թէ ո՛չ որ պիտի դար այս արձակ գրութիւններն անոնց խորէն հանելու : Գալով այն դոյզն քերթուածոց՝ որոց ձեռք զարկաւ իւր վերջին օրերուն մէջ , ա՛յնքան վշտած էր , որ տրհած և կծու կերպիւ կը խօսէր անոնց վրայօք : Եւ արդարեւ շատ անգամ իւր քերթուածոց ստուերագիրը միայն կը թողուր : Իւր երգերն այնքան՝ ոգեկալաւ էին և կիսահագագ որ չէին կրնար նոյն զօրութեամբ մինչեւ տան մը վերջը հասնիլ : Միտքը նորանոր դաղափարաց բղխմամբ կաշկանդեալ ըլլալով , մեծ դժուարութեամբ ոտանաւորները կ'ամբուողջացընէր , շատ անգամ ալ պակաս տեղեր կը ձըգէր : Յանդերու և ձեւի մէջ այնպիսի նորօրինակ բան մ' ունէր որ կատարեալ տաղանդներու համար մի շատ թանկագին յատկութիւն կրնայ համարուիլ , այլ վերջապէս երկրորդական է ու չի կրնար և ոչ մի էական յատկութեան տեղ բռնել : Ոտանաւորին ազւոր ձեւ մը միայն տալը բաւական չէ , համ , հոտ և զոյն ունենալու համար անհրաժեշտ պէտք մ' է որ գաղափար մը , պատկեր մը , զգացում մը պարունակէ այն : Մեղուն արհեստական կերպիւ իւր մոմեղէն բլլճներուն վեց անկիւնները յօրինելն յետոյ , մեղրով կը լեցընէ զայնս : Բլլճը ոտանաւորն է , մէղրը բանաստեղծութիւնը :

Ասլուա՛ տաճարին մէջ աւելի իւր տեղը կը համարուէր : Հոն , իւր բանաստեղծութիւնը մերթ իւր սրտին չափ դողողուն էր : Բայց հոն ալ շատ

անգամ ամեն ինչ բացատրելու անկարող : Արքեմն տառապանաց սաստկութենէն, քերթողը Մարդ կը դառնար, իւր եղերերգը խոստովանութիւն մը, իւր երգը ճիշ մը . գեղեցիկ էր Դա յայնժամ :

Որովհետեւ իւր արձակ կամ ոտանաւոր գրուածոց էական և մնայուն արժէքին քիչ կարեւորութիւն կու տար, որովհետեւ իւր արհեստագիտի երազներէն և ոչ մին կրցած էր իրականացընել, ուստի և մեռաւ սա՛ տխրաբեր համոզմամբ թէ իրմէ յետոյ ոչինչ պիտի մնար : Կը խաբուէր :

Իւր մէկ նամակը կայ և պիտի մնայ :

Սքանչելի նամակ մ' ըստ մեզ, նամակ մը ճարտարաբան, խորիմաստ, հիւանդաբոյր, տենդային, վշտահար, յիմարական . եղական նամակ մը՝ որ ամբողջ հոգի մը կը պարունակէ իւր մէջ, ամբողջ կեանք մը, ամբողջ մահ մը . տարօրինակ նամակ, ճշմարիտ քերթողի մը նամակ, լի ցնորիւք և ճշմարտութեամբ :

Այս գիրն այն բարեկամէն առինք, առ որ ուղղած էր Իմպէն Կալլուա : Առանց որ և է փոփոխութեան կը հրատարակեմք, իր կրկնութիւններովն, նորանչան ոճովն, և բացատրելու դժուարութիւններովն՝ որ ժընէվցւոց ոճին յատուկ է : Չայս գըրողն ստիպուեցաւ մի քանի բաներ վերցընել անոր մէջէն, զի մի՛ գուցէ անպատշաճ երեւին : Չանացինք որ այս հրատարակութիւնը՝ բոլորովին յօգուտ գեղարուեստից, կարելի եղածին չափ անհատի մը չի պատկանի : Անոր համար յատուկ անուանք՝ որ ամբողջապէս նշանակուած էին ձեռագրին մէջ,

սկզբնատառերով միայն կը գրեմք հոս, որպէս զի անձնասէր կամ պարկեշտ անձինք չի վիրաւորին :

Այս ամենը իմացընելէս յետոյ, կը կրկնեմք թէ նամակին իսկ էութիւնն խղճի մտօք յարգուած է : Ո՛չ բառ մ' աւելցած է և ոչ իրողութիւն մը փոխուած : Կը յուսամք թէ մեզ նման հետաջրքրութեամբ պիտի կարդացուի՝ հոգւոյ մը այս խորհրդաւոր խոստովանութիւնը, հոգւոյ մը՝ որ այլոց շատ քիչ կը նմանի, և սակայն զամենքն ալ կը պատկերացընէ :

Ահաւասիկ ըստ մեզ, այս եղական նամակին հանդամանքները : Բացառութիւն մ' է այն և ամեն ինչ է :

Փարիզ. 11 Դեկտեմբեր 1827

Հէքէ Իմ Տ՛ :

Քանի մ' օրէ 'ի վեր միտքս դրած եմ քեզ գըրել : Սակայն վշտերս, հիւանդութիւնս գըր գիտես, Փարիզու հեռաւորութիւնք՝ որով օրուանս կէսը կ'սպառի, ահա այս ամենը արգելք եղան ինձ : Ո՛հ, ո՛րչափ կը տառապիմ, և ո՛րչափ տառապեցայ : Անկարելի է որ կարենամ կանոնաւոր ձեւ մի տալ նամակիս, հոգւոյս վիճակն իսկ բանիւ նկարագրեմ, ցուրտ բառերով իրականացընեմ աղեկէց և մշտընջենական տպաւորութիւնքս, և այլն . . . :

Այսօր Գեկանմբերի 11 է : Ճամ երեք : Քալեցի , կարգացի . գեւեցիկ են երկինք . սաստիկ կը տանջուիմ : Հոկտեմբերի 27 ին հոս հասայ , և ահա ամիս մ' է որ կը հեծեմ և կը տառապիմ անյոյս : Եղան ժամեր , օրեր՝ յորս յուսահատութիւնս յիմարութեան կը մերձենար : Տիգրեական և բարոյական ցաւոց ենթարկուած , մարմինս խոնջեալ , հոգիս բեկեալ , աղմուկեց և ծխամած փողոցներու մէջ անծանօթ ու միայնակ , անդադար կը թափառէի , մարդկանց մի անհուն ժխտիւն մէջ , որք լրենք եւս միմեանց անծանօթ են :

Երեկոյ մը Սէն գեաին վրայ կամրջի մը որմին յենած էի : Բիւրուսոր լոյսեր յանհունս կ'երկարածագէին , գետը կը հոսէր : Հողնութենէս շէի կրնար առաջ երթալ , և հո՛ն , մինչ անցորդաց ոտանք անշուշտ զիս խենդ կը կարծէին , հո՛ն այնքան կը տառապէի որ լայն իսկ անկարելի էր : Երբեմն լընէփ մէջ զգացումներս կը ծաղրէիք : Ե՛հ , հիմա առանձինն կը լափեմ՝ գանոնք : Աը տանջեն զիս և կը յուզեն հանապազ . հոգիս խռովելու համար կը միանան ամեն ինչ՝ մեր ունայնութեանց , ուրախութեանց , մշտերու և մտածմանց ոչնչութեան անհուն և մըշտընջեանական խորհուրդը , վիճակիս անստուգութիւնը , թշուառութեան երկիւղը , ջղային հիւանդութիւնս , անծանօթ ըլլալը , այլոց դիմելէն օգուտ չի պաներս , միայնութիւն , անտարբերութիւն , ինքնասիրութիւն , թախուր սիրտ մը , երկնքի , լերանց , դաշտաց պէտքը , նոյն իսկ միլիտոփայական խոհեր , և այս ամենէն աւելի , ո՛հ , այս ամենէն աւելի , հայրենեացս յիս ազգած սրտասպառ վշտերը : Այն

վայրկեաններ՝ յորում կը մտածեմ երբեմն սիրածներուս վրայ , դեռ կը կարծեմ՝ ձեմեւ 'ի Սէնթ—Սէթուան , կը յիշեմ հող կրած ցաւերս , և , ուրախութիւնքս՝ զոր շատ քիչ կրցայ վայելել :

Այն վայրկեաններ՝ յորս բարեկամի մը կամ ծնողացս դէմքը , նուիրական վայր մը , ծառ մը , ժայռ մը , փողոցի մ' անկիւնը աչացս առջեւ կու դան , և ահա Փարիզու ջրկիրի մ' աղազակները կ'սթափեցընեն զիս : Ա՛հ , ո՛րչափ կը տառապիմ այն ատեն : Շատ անգամ միտքս և մարմինս խոնջած , ամայի խցիկս մտնելով կը նստիմ հոն և կ'երարեմ , բայց դառն , մթին և զառանցական երազք : Ամեն բան կը յիշեցընէ ինձ խեղճ ծնողքս՝ զորս շի կրցի երջանկացընել , լուացարարաց խնամքներն և այլն . . . և այս ամենը կը խղդեն զիս : Չաչու ժամերս ալ փոխուած են : Ա՛հ , ո՛րչափ կը փնտռեմ լընէփ սենեակս՝ ուր այնքան վիշտ կրեցի , դասատունս , հօրեղբայրս , վառարանին անկիւնը , ծանօթ դէմքեր , ընտել փողոցներ : Յաճախ՝ ոչինչ բան մը , անշահ իր մը , գուլպայ մը , ծնրակապ մը , անցեալը կը կենդանացընեն մտացս առջեւ , և ներկային բոլոր ցաւերովը կ'ընկճեն զիս : Մարդուս ճակատագիրն է կարծես վնասուել ինչ որ գտնելէն յետոյ պիտի անիծէ : Եւ ոչ իսկ ցաւերս հաճոյք կ'ազդեն ինձ , մանրախոյզ միտքս ալ ոչինչ հրապուրելի կ'ընէ ինձ համար :

Քսանուձկ տարեկան թառամեալ հոգւոյ մը ձանձրոյթ , դառն տարակուսանք , անորոշ ցաւեր երջանկութեան մը՝ որ մեր լերանց կատարներուն

վրայ մտարը մտնող արեւուն նշոյններէն աւելի ան-  
 նչմար կ'երեւին , դրական վտեր , իտէական վը-  
 տեր , հոգւոյս խորն արմատացած թշուառութեան  
 ստուգութիւն , ճշմարտութիւն մը՝ թէ հարստու-  
 թիւնը թէ և մեծ բարիք մ' է , սակայն զմեզ կա-  
 տարեալ կերպով չի սլտի կրնայ երջանկացընել .  
 ահաւասիկ ասոնք են հանապաղ տառապեալ հո-  
 գիս տանջողները : Ո՛հ , իմ միակ բարեկամս , քանի՛  
 դժբաղդ են նոքա՛ ոյք դժբաղդ են ծներ :

Եւ սակայն շատ անգամ կը թուի թէ եթերա-  
 կան նուագ մը կը հնչէ ականջիս , թէ մելամաղձիկ  
 և մարդկային ժխորին անյայտ ներդաշնակութիւն  
 մը , երկրագունտներուն վրայ թափառելով , մինչ  
 յիս կը հասնի . կը թուի թէ հանդարտ ու վեհ վը-  
 տերու հնարաւորութիւն մը կը նշմարուի մտացս  
 հորիզոնին վրայ , ինչպէս հեռաւոր աշխարհաց գե-  
 տերն երեւակայութեան մթնոլորտին : Բայց յակա-  
 մայս իրական կեանքիս դառնալով , ամե՛ն ինչ կը շի-  
 ջանի դարձեալ , ամեն ի՛նչ :

Քանի՛ քանի անգամ Ռուսոյի հետ գոչած եմ .  
 « Ո՛ ծխամած և ցեխոտ քաղաք » : Ո՛րչափ արդեօք  
 տառապեցաւ հոս այս զգայուն հոգին : Ինձ պէս մե-  
 նացեալ , աստանդական , տառապեալ , բայց փա-  
 աւոր և մեծամեծ անցքերու դարու մը վաթսուն  
 տարիներովն նուազ տարաբաղդ քան զիս , Փարի-  
 ջու մէջ կը հեծեծէր , հոն կը հեծեմ և ես , այլք ալ  
 պիտի գան հեծեծել : Ոչնչութիւն , ոչնչութիւն :

Բայց և այնպէս հիացման վայրկեաններ ալ ու-  
 ձեցայ : Գիշեր մը յՕբէնան , կորնիտի պարտիան գե-

ղեցիկ նուագերգը՝ պահ մը մուցուց ինձ կրած ցա-  
 ւերս : Դու գիտես թէ քանի՛ կը սիրեմ շքեղութիւն ,  
 փառք , պատուանուն , վերջապէս ամեն ինչ՝ որով  
 կրնամք մտնել աշխարհի մը մէջ , գեղեցիկ՝ որչափ  
 որ կարելի է , կամ գէթ յարտաքուստ այնպէս ե-  
 բեւցող : Ի՛նչ ներգործութիւն որ ըրած էին յիս այն-  
 քան նշանաւոր և օտար դէմքեր ՚ի յընէվ , վեհ հո-  
 գիներ , մեծանուն անձինք , այնքան բազմածափ  
 հանդերձանք ծառայից , սպասք կառայ , վերջապէս  
 բնութեան շքեղութեան մէջտեղ , քաղաքակրթու-  
 թեան շքեղ ու հիանալի տեսարանները , որով յը-  
 նէվ իւր մեծութեանց մասին թերեւս Եւրոպիոյ ա-  
 ուաջին քաղաքը կրնայ համարուիլ , այս ներգործու-  
 թիւններն ուրիշ տեղ մը չի կրցի զգալ ՚ի Փարիզ  
 քան յՕբէնան , կարդալով նաեւ բոլոր հոգւով Աւ-  
 ֆիէոնի կեանքը , նոյն իսկ իւր ձեռք դրուած , զոր  
 չորս տարիէ ՚ի վեր թողած էի : Այս չորս տարուան  
 միջոցին ի՛նչ բաներ անցան ինձ և ամեն հոգիներու  
 համար : Ա՛յլ ըսէի թէ յՕբէնան կը գտնուէի : Նուա-  
 գարանին հմայք , թատրոնին շքեղութիւնը , օթեակ-  
 ները գեղեցկացընող զարդերն ու դէմքերը , այս  
 ամենը կը շնչէի , և ինքզինքս իշխան , մեծատուն ,  
 բարձրաստիճան կը կարծէի . աչացս առջեւ կը նը-  
 կարուէր սեթեւեթիւք և վայելչութեամբ շրջապա-  
 տեալ նոր աշխարհ մը՝ զոր կը սիրէի , վասն զի ան-  
 ծանօթ էր ինձ , կացութիւնս մուցած էի կամ լաւ  
 եւս կը ջանայի մոռնալ զայն : Թէպէտ նստարաններ  
 էին որ զիս չուրջ կը պատէին , սակայն ինձ համար  
 օթեակի մը մէջ էի , որովհետեւ ինձմէ վերը միայն  
 կը նայէի : Պատրանալով յայնպիսի յուսոյ , ներդաշ-  
 նակութեան , շքեղութեան և ունեւորութեանց Ո՛վ-

5178



կէանի մը մէջ ընկղմեալ էի : Այս վիճակս կէս ժամ տեւեց : Ո՛հ , ո՛րքան տխուր , ո՛րքան դառն վայրկեաններ յաջորդեցին անոնց : Այսպէս էր և հարուստ , ազնիւ ու տարաբաղուն Ալֆիէռիի կեանքը : Անդ՝ մեծանուն դեսպաններ , մշտնջենական երթեւեկութիւնք , սենեկասպասք և այլք կը տեսնուին միայն : Ո՛հ , ի՛նչ աղւոր բան է երեսուն հազար Ֆլուռանք եկամուտով հանդերձ դժբաղդ ըլլալ . . . : Ո՛չ , ո՛չ , ներէ՛ այս խօսքիս : Գիտես թէ ի՛նչպէս թշուառութիւնն իւր ցնցոտիներէն մերկացընելով , զինքն իւր սոսկալի մերկութեան մէջ կը դիտեմ , որ նոյնն է ամենուս համար ալ երբ մեր հոգւոյն խորը կ'զգամք բան մը՝ որ աւելի ուժգին կը բաբախէ մեզ՝ քան թէ ամբոխին համար : Զգածութեանց տակ կ'ընկճիմ . կը թողում գրիչս , երազել կ'ուզեմ : Արդ խնդա՛ , վասն զի այս վիճակիս մէջ լաւ եւս կը ճանչնաս զիս , այնպէս չէ՞ :

Այսօր 27 Դեկտեմբեր , գրիչս ձեռք կ'առնում : Կը տառապիմ և միշտ : Սոսկալի վայրկեաններ ունեցայ . բայց չեմ ուզեր դարձեալ գանգատներովս ձանձրոյթ պատճառել քեզ : Կէս գիշերը քանի մը վայրկեան անցած է : Ուրեմն ամսոյն 28 մտանք : Ի՛նչ փոյթ : Դեռ կը լսեմ մի քանի հեռաւոր կառաց դղողիւնը , բայց Օտէօնէն ելան : Տխրութիւն , ձըմեռ , մենութիւն և գիշեր կը տիրեն շուրջս : Ծօսէ — Մէն — Ժէռմէն — Տէ — բռէ փողօցը , տան մը չորրորդ դստիկոնը կրակարանին քով կը հսկեմ : Սենեակս բաւական վայելուչ , բայց ամայի է . տխրութեանս և ձանձրոյթիս հետ միայնակ եմ : Պիտի հաւատա՞ս եթէ ըսեմ թէ ալ կիները չեմ սիրեր :

Անոնց նկատմամբ և ոչ իսկ փոքր տենչ մ' ունիմ : Պէտք է որ բոլորովին վշտացս մէջ թաղուած մնամ : Բայց դիւրաւ նորանոր երազոց պիտի յանձնեմ ինքզինքս : Բուն խնդրոյն գամք : Երկար ատեն է բարեկամութիւն հաստատած եմ \*\*\*\*ի հետ . . . . .

Ե. Ն. ի հետ ալ մտերմացած եմ : Այս վերջիւնը \*\*\*\*էն աւելի սրտադիւր անձ մ' է . շատ պիտի ախորժիս անկից , մանաւանդ առաջին տեսութեանցդ մէջ : Ն — ընդ հանրապէս հետդ խօսած ատեն աչքերը կը լեցուին : Նա այն յատկութիւնը ունի , զոր ասոյ՛ի կը կոչեն : Հայրական գորով մը կը սածէ յիս : Թերեւս յանցանք մ' ըլլայ իրեն համար , միջակ աստիճան անձանց հետ շատ ներողաբար վարուիլը , բայց այս բանս ալ մեծ բարեսրտութեան մ' արդիւնքն է : Իսկ \*\*\*\* ատոր բոլորովին ներհակ բընութիւն մ' ունի . պաղ աչօք կը դիտէ կարծեմ հասարակ դատած մարդը : Թերեւս ըսես թէ անձնասիրութիւն կայ այդ բանին մէջ , բայց եթէ քեզմէ ակնածէի , աւելի ազէկ կ'ըլլար չի գրել :

Կիւրակէ երեկոյները Ն — ի տունը կ'անցընեմ : Հոն կը խմբուին շատ մը գրագէտներ : Հոն տեսայ զՏիկին թ — , հոն է — Տ — Բ — ի , թ — պառոնին , և Պ . Ս — , նշանաւոր գիտնականին՝ որ ինձմէ կ'ախորժի , և հնազէտ ու պատմաբան Պ . Ռ — ի հետ տեսնուեցայ : Վերջապէս Պ . Ժ — զոր հոն ճանչցայ , բարեբեկամացս կարգը կրնամ դասել : Իւր մտածումներովը շատ մեծ է նա : Եթէ հոգւոյն մէջ քիչ մ' աւելի խանդ ունենար , պիտի ըսէի թէ զարմանալի

մարդ մ' է : Իւր Վօլթու Աքօթի վրայ և այլ յօդուածները կարդացած ես : Այսպիսի մարդէ մը յարգըւելիս բաւական միտթարուծիւն մ' է վշտացս , առաւել եւս որ չոր ու ցուրտ կ'երեւի առաջին անգամ տեսնելուդ , միջակ մարդկանց յուսահատուծիւն կ'ազդէ , զանոնք կ'արհամարհէ , թէպէտ համբաւ իսկ ստացած ըլլան : Պ. Ժ.— Լ—ին կը նմանի , վայելչագէմ անձ մ' է : Իւր ցամաք երեւոյթին տակ զուարթարար ընութիւն մ' ունի , և բոլոր անձին , շեշտին և ձեւերուն մէջ լեռնային և Անկլիական երեւոյթ մը կը պահէ : Ժիւռայի մէջ ծնած է : Ի Ժընէվ ալ շատ ճամբորդած է : Միմեանց համակրանք կը տածեմք մեր խորհուրդներովը , եզրակացութիւններովը , և զգացածնիս բացատրելու համար քաջածղ ժուարուծիւններովը : . . . . .

Գալով Ն—ի , սա չափ կ'ըսեմ թէ , գիւղացի աղնուականի մը կերպարանքն ու ճաշակը ունի : Բանաստեղծութիւններդ փոխ տուի իրեն , զմայլեցաւ անոնց վրայ : Բ. Լ.— Ուղեորութիւն 'ի Յանսոյան անուն քերթուածը պիտի հրատարակէ : Անոր մի քանի հատուածները կարդաց ինձ , Պայռընի նման բանաստեղծական է . բայց չի կան հո՞ն , ո՛չ այն բեղմնաւոր մտածումներն , և ո՛չ այն տառապեալ և մեծ հանճարը՝ որով կը յուզեն զմեզ Անկլիացի վիպասանը և իւր Յլօռանսի նախանձորդը : Մ. Լ.— Կէօթէի կը նմանի (նմանութեանց մասին ունեցած մտլութիւնս գիտես) : Մասնաւոր ու հիանալի ձեւով մը կը կարդայ իւր տաղերը . պարզ է նա , հանգարտ և զգայտ . բողբոջականի ձեւ մը կը տիրէ անձին վըրայ : Շատ ճամբորդութիւն ըրած է : Քովը բանաստեղծութեանց հաւաքածոյ մը կայ , զորս հրատարակելու կը դժկամակի , ըսելով թէ՛ խիստ անհատական բաներ են : Ահա՛ս «Իր» է : Սա ալ ըսեմ թէ՛ \*\*\*\* և Ն— , արժանիքէն աւելի յարգ կ'ընծայեն քերթուածոցս : Շատ մը վկայեր ունիմ թէ 'ի Ժընէվ դրած և թէ՛ աստ : Խիստ մտերմացայ Պ—ի որդւոյն՝ բանաստեղծին հետ , որ ընտիր գլխու տէր է : Ամէ մը յետոյ Ծ— ներկայացընել պիտի տայ իւր Բ—ը , որ բոլորովին վիպական թատերգութիւն մ' է : Հեղինակը թէ և գեղեցիկ հանճարի տէր , սակայն գինետան մարդու մը կերպարանքն ունի : Իւր տաղերը սիրելու համար հարկ չի կայ գինքը ճանչնալ : Որպիսի փոփոխումն : Այ յիշեմ որ դեռ ձէ՛ն՝ Ռուսաստան չի գացած , իւր Չի՛նոս անուն խաղը զմեզ այնքան յուզեց որ լացինք , հեղինակին անունը դեռ լած չըլլալով , երբ բոլորովին երազայոյզ գրուածի մը ստորեւ տեսայ զայն , խտկական մէկը երեւակայեցի զինքը , բայց հասարակ մարդու և զինուորականի մէջտեղ բան մ' է : Վ— (զոր ժամ մը միայն տեսայ \*\*\*\*ի տունը) , եօթն ոտք երկայնութիւն ունի : Երբ խոնարհ մէկու մը հետ խօսի , ստամբըր կամար մը կը ձեւացընէ և ոտքերը եռանկիւն մը : Եթէ նստի , երկու մասի կը բաժնուի որք սրանկիւն մը կը կազմեն : Աւելցու՛ր նաեւ թէ՛ առանց «յապէ»ի երկու խօսք չի կրնար ըսել , թէ՛ հին վարչութենէ մնացած բարեկիրթ անձ մ' է , և մողէվի պէս նիհար : Չինքը տեսնողին ա՛հ կ'ազդէ : Գու գիտես թէ՛ Սեբեհէն Բ— անուամբ գեղեցիկ խաղ մը դրած է : Լ—ը կը ճանչնայ : Ա— , մենամարտիկ պատմաբանը , քաղաքակրթեալ մտաւճառի մը կերպարանն ունի : Գաժան է բնութեամբ , սակայն պատկառե-

տեղծութեանց հաւաքածոյ մը կայ , զորս հրատարակելու կը դժկամակի , ըսելով թէ՛ խիստ անհատական բաներ են : Ահա՛ս «Իր» է : Սա ալ ըսեմ թէ՛ \*\*\*\* և Ն— , արժանիքէն աւելի յարգ կ'ընծայեն քերթուածոցս : Շատ մը վկայեր ունիմ թէ 'ի Ժընէվ դրած և թէ՛ աստ : Խիստ մտերմացայ Պ—ի որդւոյն՝ բանաստեղծին հետ , որ ընտիր գլխու տէր է : Ամէ մը յետոյ Ծ— ներկայացընել պիտի տայ իւր Բ—ը , որ բոլորովին վիպական թատերգութիւն մ' է : Հեղինակը թէ և գեղեցիկ հանճարի տէր , սակայն գինետան մարդու մը կերպարանքն ունի : Իւր տաղերը սիրելու համար հարկ չի կայ գինքը ճանչնալ : Որպիսի փոփոխումն : Այ յիշեմ որ դեռ ձէ՛ն՝ Ռուսաստան չի գացած , իւր Չի՛նոս անուն խաղը զմեզ այնքան յուզեց որ լացինք , հեղինակին անունը դեռ լած չըլլալով , երբ բոլորովին երազայոյզ գրուածի մը ստորեւ տեսայ զայն , խտկական մէկը երեւակայեցի զինքը , բայց հասարակ մարդու և զինուորականի մէջտեղ բան մ' է : Վ— (զոր ժամ մը միայն տեսայ \*\*\*\*ի տունը) , եօթն ոտք երկայնութիւն ունի : Երբ խոնարհ մէկու մը հետ խօսի , ստամբըր կամար մը կը ձեւացընէ և ոտքերը եռանկիւն մը : Եթէ նստի , երկու մասի կը բաժնուի որք սրանկիւն մը կը կազմեն : Աւելցու՛ր նաեւ թէ՛ առանց «յապէ»ի երկու խօսք չի կրնար ըսել , թէ՛ հին վարչութենէ մնացած բարեկիրթ անձ մ' է , և մողէվի պէս նիհար : Չինքը տեսնողին ա՛հ կ'ազդէ : Գու գիտես թէ՛ Սեբեհէն Բ— անուամբ գեղեցիկ խաղ մը դրած է : Լ—ը կը ճանչնայ : Ա— , մենամարտիկ պատմաբանը , քաղաքակրթեալ մտաւճառի մը կերպարանն ունի : Գաժան է բնութեամբ , սակայն պատկառե-

լի : Տեղս չի ներեր որ այլ ծանօթ գրագիտաց նը-  
կատմամբ եւս խօսիմ : Միայն Ս—ի մասին երկու  
խօսք կ'ուզեմ ըսել : Կ'երեւի թէ այս մարդը շատա-  
խօս և լուսաւորեալ անձանց , Տիւրքի , Սուէնտէ  
Պօռկի և ճմարիտ քերթողաց ցեղէն է : Նկարա-  
գրութեան մասին խիստ ճարտար է : Հետը մի ան-  
գամ տեսնուեցայ , բաւ էր այս : Իրաւ է թէ տե-  
սութիւններս երեք ժամ միայն տեսեց : Այդ ըղեղն  
արդէն այնքա՛ն առաւելութիւններ ունի իւր մէջ , որ  
աւելորդ կը համարիմ ուրիշ գովեստ կարգաւ : Ս—  
(Ռէզ—է—օ) խմբագիրը , զիս Պէնժամէն Քօնսթան-  
թի պիտի ներկայացընէ : ՉՍ— , ծանրագլուխ ժո-  
ղովրդապետ մը կը կարծէի , և տեսայ որ թեթեւօ-  
ւիկին մէկն է եղեր , առանց հանճարի , բայց խելա-  
ցի և արժանեաց տէր : Գեռ շատ կարեւոր բաներ  
ունիմ քեզ ըսելու , այլ սակայն նամակս ընդհա-  
տելու ստիպուած եմ :

Մեղեքներդ հրատարակուեցան : Աղւոր տիպ մ ,  
է : Հիացմամբ կարդացի զայնս մի քանի անգամ :  
Ռ—ի մէջ անոնց նկատմամբ յօդուած մը կար : Հրա-  
տարակութիւններդ յաջողցընելու համար ջատա-  
գովներու պէտք ունիս : Ար վախճամ որ շատ քիչ  
ծախուին անոնք : Բանաստեղծութիւնը այնքան ան-  
յարգի է հիմայ , որոյ վրայ գաղափար մ' ունենա-  
լու համար հոս պէտք է գտնուիլ : Ժընէվէն հազար  
անգամ զէչ է աստ . ոչ ոք ոտանաւոր կը կարդայ :  
Այժմ աւելի քիչ կը ծախուի , 'ի բաց առեալ լ—ի ,  
Տ—ի , և \*\*\*ի գործերը : Ասկից զատ փարիզու մէջ  
գրեթէ ամեն ոք աղւոր ոտանաւոր կը գրէ : Այն-  
քան ձեռագիր կայ կարդալու , որ օտար հեղինակ

մը՝ որոյ միակ պաշտպանն իւր տաղանդն է , բարե-  
դէպ առթիւ մը միայն կրնայ յաջողութիւն գտնել :  
Փարիզէն հեռի գտնուիլդ ալ գրքերուդ ծախուե-  
լուն արգելք կ'ըլլայ , բայց անձիդ երջանկութեան  
օգտակար է : Եթէ հոս ըլլայիր , մեծն Բարիլոն  
ձանձրոյթ պիտի պատճառէր քեզ , կեղտ , հոգնու-  
թիւն և տխրութիւն : Չեմ գիտեր թէ հոգիդ ի՞նչ  
վիճակի է 'ի Տլուանս , բայց ապահով եմ որ փա-  
րիզու մէջ աւելի գէշ պիտի ըլլար . թողումք որ վեր-  
ջին ծայր դժուար է հոս ապրիլը : Մինչեւ ցարդ դեռ  
բան մը չեմ շահած , սակայն ճմարիտ բարեկամներ  
ունիմ , որք ամեն ջանք կ'ընեն ինձ գործ գտնելու  
համար : Ինձ գրեցին թէ լ—ի հետ բարեկամացած  
ես , Գլխէն մինչեւ ոտքը նկարագրէ զայն : Արդեօք  
երեւակայածիս նման Տլուանսացի Լօուս Պայուրն մ'  
է նա , անհոգ , ունայնասէր , յանկուցիչ և դժբաղդ ,  
միտքն անսպառ , մեծ հանճարի տէր , ազլու ձայ-  
նիւ , պերճասէր , վերջապէս բանաստեղծական նոր  
մթնոլորտ մը՝ որ մեր փարիզեան գրագիտաց աղտե-  
ղի մթնոլորտէն բոլորովին կը տարբերի : Միթէ լ—  
երեւակայած հոգիս չէ՞ , յորում կը սիրէի տեսնել  
իւր ամենէն սնտաի գործոց մէջ իսկ տղայական  
ցոյցք մը : Գու ալ երբեմն կ'ատէիր այս սիրուն մո-  
լութիւնները , այլ հուսկ ուրեմն քու մէջ ալ գտար  
զանոնք , ինչպէս նաեւ պիտի գտնեմք ուրիշ շատ մը  
բանաստեղծներու վրայ , որք կորովի միտք մը ունե-  
նալու և գերազանց անձ մ' ըլլալու յատկութիւնները  
կը ցուցընեն : Եամը մէկ ու կէսն է , նամակս կ'ընդ-  
հատեմ : Ի ստորեւ երկու եղբերգութիւններ կան ,  
որոց ներքեւ դեռ մի քանի բան գրելու միտք ունիմ :

Բարեկամ, նամակս սկսելէս և շարունակելէս երկար ատեն ետքը կրկին ձեռք կ'առնում զայն ։ Երեկոյեան ժամը ութն է և Մարտի 51ը ։ Վշտերս զիս խենդ դարձուցին, յուսահատութիւնս կ'ընկճէ զիս ։ Անկարելի է երեւակայել թէ ո՛րքան տառապեցայ այսօր ։ Երեկոյեան դէմ տենդ մը եկաւ վըրաս, բարոյական վշտաց յանշարտութիւնն էր այն ։ Մտի՛կ ըրէ ։ Եթէ կարենայի հաւատալ թէ՛ գէթ օր մը երջանիկ պիտի ըլլա՛մ ։ Բայց ներկայս աւելի նաեմ կը ցուցընէ զապագայս ։ Ձիս կը ճանչնաս . գիտես թէ ի՛նչ այլանդակ բնութեան տէր եմ ։ Անձիս վրայ բան մը նշմարեցի, հասկցայ թէ այս կամ այն բանին համար միայն դժբաղդ չեմ ես, այլ տեւական ցաւ մը ունիմ, որ զանազան կերպարանք կ'առնու ։ Գիտես նաեւ թէ մինչեւ ցարդ որո՞նք էին իմ թշուառութեանս շարժառիթները, կամ լաւ եւս է ըսել՝ քանի՞ ձեւեր ստացան լեարդս, մաղձս, և զիս տանջող տարրները ։ Երբեմն Անկլիացի չի ծնիլ էր այն, երբեմն գիտութեանց յարմարութիւն չունենալս և աւելի սովորաբար՝ հարուստ չըլլալս, թշուառութեանց և նախապաշարմանց դէմ կուռիլս ու անծանօթ ըլլալս ։ Գիտես նաեւ թէ ձընէվ եղած ատենս այնպէս կ'երեւար ինձ՝ որ եթէ երբէք կարենայի Փարիզու մէջ նետուիլ, երջանիկ պիտի ըլլայի ։ Է՛հ, լաւ ։ Բարեկամս, գրեթէ ամեն նշանաւոր գրագիտաց հետ ծանօթացած եմ ։ Անոնցմէ մի քանին, ինչպէս \*\*\*\*, Ս, Ն—, և այլք նշանաւոր բարեկամներս են, որոց հետ այնքան ընտանի եմ ցորչալի քեզ հետ ։ Է՛հ, լաւ ։ Ա՛լ ունայնասիրութիւնս յագեցած է . շատ անգամ սըրահներու մէջ մի քանի աշխարհային գոհութիւններ

կ'ունենամ . վերջապէս երբեմն երեկոյթի մը մէջ տարած վայրկեանական յաղթութիւնքս արդիւ կ'ընեն զիս, և ասոնցմով հանդերձ, ամբողջ կեանքս, չըսեմ թշուառութիւնս, դժնեայ քաղցկեղ մ' է ։ Երակացս մէջ կապարեայ հեղուկ մը կը հոսի ։ Եթէ մէկը կարենար հոգւոյս խորը տեսնել, պիտի գթար վրաս . կը վախնամ թէ մի՛ գուցէ խենդ ենամ ։ Քանի որ հոս եմ, վշտերս հինգ վեց ձեւ առին . նախ հայրենեացս ցաւն էր և ապագային անստուգութիւնը, յետոյ մենութիւնս, ոչնչութիւն, և սոսկ կալի տառապանաց անդուեղ մը . վերջապէս երկու ամսէ 'ի վեր բոլոր ցաւերս մէկ կէտի մը վրայ ամփոփուած են ։ Այսքան յիմարական բան մ' է այն, զոր չեմ համարձակիր յայտնել . բայց կը պաղատիմ, կերպ մը վիշտ համարէ՛ զայն կամ զիս սպառող վիրաց մէկ տեսակը . սովորական եղանակաւ մի՛ դատեր զիս, չարիքը զննէ և ոչ առարկայն ։ Ընե՛մ ալ ։ Տառապանացս այս կենսական մասը՝ Անկլիացի չի ծնիլ է ։ Մի՛ ծաղրեր կ'աղաչեմ . սաստիկ կը տանջուիմ ։ Ճամարիտ սիրահարներն ալ ինձ նման մենամուլ են, մէկ գաղափար մը միայն ունին, որ այլ բոլոր զգածմանց կուլ կու տայ ։ Եւ ես՝ որոյ հոգին երկար ատեն տարօրինակ յուզմանց նշաւակ եղած է, և ես մենամուլ եմ դարձած ։

Անցեալները Տիկին Ֆուլտոնըրի Վեբը կը կարդայի . անկարելի է բացատրել թէ ինչ կ'զգայի զայն կարդալով ։ Այս զարմանալի գիրքը երբեմն ձանձրոյթ կը պատճառէր ինձ, իսկ այժմ կը խոզվէ զիս ։ Պատճառն այն է՝ որ կիւսթալու ինձ նըման զոհ կ'երթայ կրից սաստիկութեան, կամ լաւ



եւս է ըսելք զինքը լափող զգացմանց ազդեցութեան .  
բայց նա բնական անդունդ մ' է գտած , այն է՝  
Սէրը , մինչդեռ նոյն ազդեցութիւնք հոգւոյս մէջ  
ունայնութեանց հետ կռուելով , ուրուականներ  
կ'երկնեն : Գարնանային արփուոյն առաջին նշոյնե-  
րովը կ'ընթեռնուի այս վէպը , Ղիւքսէմպուռուկի տը-  
խուր և մենաւոր ծառուղեաց մէջ : Ամեն վայրկեան  
կանգ կ'առնուի բեկեալ սրտի :

Արդ , տե՛ս թէ Անկլիոյ վրայ ունեցած սաստիկ  
սէրս ինչպէս ծնունդ առաւ : Նախ գիտես թէ մե-  
ռելոց հետ անդրէն ապրիլ կը սիրեմ , կ'ուզեմ ճանչ-  
նալ անոնց երբեմն վարած կեանքը , անոնց հետ  
կենակցիլ և իրենց կենաց զանազան պարագայնե-  
րուն հետամուտ լինել . կը սիրեմ տածել այնպիսի  
համակրութիւններ՝ զորս ժամանակին պատրանքը  
և անձերու ներկայութիւնը չեն կարող ջնջել : Է՛հ ,  
լաւ ուրեմն : ՅԱնկլիա առ նուազն յիսունի չափ բա-  
նաստեղծներ պիտի գտնէի , որք բաղդայոյզ կեանք  
մը ունին և որոց գործերը լի են երեւակայութեամբ  
և խոհերով . . . : Ֆռանսայի մէջ անոնց նման երեք  
հատ իսկ չեմ կրնար գտնել : Ասկից զատ , պիտի  
ուենենայի հայրենիք մը՝ որոյ նախապաշարունակներն  
իսկ քաղցր պիտի թուէին ինձ : Այնքան բանաս-  
տեղծական են Անկլիոյ հին բարբերն , և այնքան  
երեւակայիւք լի՝ ինչ որ այս երկրին կը պատկանի :  
Նախ փոխանակ մէկի՝ չորս տեսակ մատենագրու-  
թիւն կայ : Ամերիկեան , Անկլիական , Սլովոտիական  
և Իռլանտական . և այս ամենը , թէպէտ նոյն լե-  
զուաւ , սակայն բոլորովին տարբեր են ընթութեամբ :  
Ինչ գրական պերճութիւն : Մոլեզին Քոբուի՝ այն

մեծ քերթողին կեանքը , երեք ութածալ հատոր-  
ներ լեցուած է , Եօնսընթինը , չորս : Առաջնոյն  
համար է որ ըսած է վոլթըռ Սքօթ , թէ « գիւղա-  
կան ամեն տանց մէջ կը գտնուի » : Եւ որ աւելին  
է , Անկլիացի մը լոկ Եօնսընթի անունը լսելով , անհա-  
տուութիւն մը , անձ մը կ'երեւակայէ , որ կենդանի  
մնալու առանձնաշնորհութիւնը ունի , որ կը գործէ  
Ֆիզիքսայէս ինչպէս՝ և բարոյսայէս : Երեսուն կեն-  
դանի բանաստեղծներ կան , եղական , նոր ու ճոխ ,  
ամենքն ալ տարբեր շաւիղներէ կ'ընթանան : Ինչ  
գրական ճոխութիւն : Որպիսի արկածախնդիր է  
տարաբաղդն Սավաթի և Շէլլիի կեանքը : Որպիսի  
հսկայ է Պայոըն : Ինչ անհուն գանձեր կը գտնէ  
հոն հոգի մը՝ որ խոյս տալով ամբոխէն , իւր խցիկը  
կը քաշուի բարեկամներ փնտտելու : Որչափ հոգ կը  
տանին Անկլիացիք իրենց հեղինակներուն : Անոնց  
գործերը հազար ու մէկ ձեւերով կը հրատարակուին :  
Ինչ սիրուն տպագրութիւններ : Ինչ զարդանկար-  
ներ , լի վառվռուն երեւակայութեամբ : Նոյն իսկ  
ժողովրդեան վրայ աչք մը նետեմք : Անշան երեւ-  
ցողք այնքան հազուադիւտ են հոն , որքան նշանա-  
ւոր անձինք ՚ի Ֆռանսա : Ամեն ինչ Զոթաշու է այս  
ազգին մէջ , մինչեւ իսկ իրենց անհեղեղութիւնքն  
և պլանդակ հագուստները կը սիրեմ : Հոն միայն  
խանդ և աւլան կը տիրէ բիւրաւոր երեւոյթներու  
տակ , հոն , անսպառ և դրական դաղափարներու  
կից կ'երեւին նաեւ ծաղու արժանի կատակներ :  
Այս երկիրն ամեն ինչ կը հրապուրէ յինքն , դրա-  
կանն ու իտէականը , Ֆռանսան և Գերմանիան :  
Նա միայն բաւական զօրաւոր է ամեն ինչ հասկը-  
նալու , բաւական մեծ է ոչինչ մերժելու համար :

Որպիսի առանձնաշնորհ յատկութիւն , բիւրա-  
ւոր մարդկանց մէջն Անկլիացի մը միշտ կը ճանչ-  
ցուի , իսկ Ֆրանսացի մը՝ ամենուն ալ կը նմանի :

Աղանդից առատութիւնն Մնկլիս կ'ապացու-  
ցանէ գոնէ թէ շատ ջերմեռանդ են , թէ ունին  
հոգի մը որ յուսոյ պէտքը կ'զգայ : Երկտասարդ  
Մնկլիացեոց սեպհական այլանդակութիւնները կ'ա-  
պացուցանէ՝ թէ յուզեալ հոգիներ ունին : Ո՛հ , ե-  
թէ երբէք տեսնես պճուանասն , ո՛րչափ պիտի տաղտ-  
կանաս : Երկրիս վրայ տեղափոխութիւնը մարդուս  
վիշտ կը պատճառէ , ինչպէս դու կը տառապէիր 'ի  
ժրնէվ եղած ատենդ : Իմ տեղափոխութիւնս ալ  
կարի դժնդակ է : Ես՝ որ երբէք չեմ սիրած Ֆրանս-  
ասն , և ամեն կերպով Անկլիացեոց համամիտ եմ ,  
չատ դառն կը գտնեմ՝ հայրենիքս թողով , նանրա-  
սէր , մեծարան , ամբարիշտ , ունայնատէր և պաղ  
ժողովրդեան մը մէջ բնակիլս . երբ կը խորհիմ թէ  
կը գտնուի կրօնատէր և Սկեպտիկեան ժողովուրդ  
մը , որ գոնէ անտարբեր չերեւնար , ուր հաւատա-  
րիմ բարեկամներ և եռանդուն հոգիներ կը գտնը-  
ւին , և ուր նանրութիւնն իսկ՝ թէպէտ անհեղեղ  
և այլանդակ , խեղկատակ և անհամ չէ՝ , ինչպէս  
'ի Ֆրանսա : Եղած պանդոկիս մէջ Ֆրանսացիք և  
Անկլիացիք ալ կը գտնուին : Որպիսի հակապատկեր :  
Գրեթէ բոլոր Ֆրանսացիներն ալ , պարծուկ , շաղա-  
կրատ և հասարակ մարդիկ են . բոլոր Անկլիացիք ,  
ազնուական և վայելուչ : Աերջապէս՝ բարեկամս ,  
կ'զգամ թէ սիրահար մը իւր բարեկամաց կրնայ բա-  
նալ սիրտը , վասն զի այս կիրքը ամեն հոգեոյ մէջ  
արձագանք կը գտնէ , ծաղրելի բան մը չէ սա . մինչ-

դեռ իմ վշտաց սաստկութեան պատճառն այն է որ  
և ո՛չ մէկու մը կրնամ խոստովանիլ զայնս , վասն զի  
անոնք լոկ ինձ կը պատկանին , և ո՛վ որ այն տե-  
սակ զգացում մը չէ կրած , անշուշտ պիտի ծաղրէ  
զիս : Եւ սակայն ( կը սղաղտիմ քեզ , կանխակալ  
կարծիքներդ 'ի բաց վանէ խօսքիս հաւատալու հա-  
մար) , այս յիմարութիւնս շարժուելէ վտեր կը պատ-  
ճառէ ինձ : Անկլիերէն գիրք մը , Անկլիացեոյ մը  
տեսքը , անոնց ծաղու առարկայ լինիլն իսկ զիս կը  
տանջեն . մէն մի դաշոյնի հարուածներ են կարծես ,  
որ խոցերս կը նորոգեն , ինչպէս մեռեալ սիրուհեոյ  
մը յիշատակը յիմար սիրահարին սիրտը : Աերջա-  
պէս այս մտլութիւնս փառաց տենչմ՝ իսկ չի թողուց  
յիս : Կ'ուզէի նշանաւոր հանդիսանալ Անկլիոյ մէջ ,  
հետեւարար նոյն լեզուաւ գրել : Բայց արդէն ցա-  
ւերս ուրիշ բան գրելու թոյլ չեն տար ինձ , և  
դժբաղդարար անոնք ալ բանաստեղծական նիւթեր  
չեն : Գիտեմ որ (այլանդակ ենթադրութիւն , ինչ-  
պէս ամենն ալ) եթէ Անկլիացի ըլլայի , այս հիւան-  
դութեամբ ոչ նուազ պիտի տանջուէի , բայց բոլո-  
րովին տարբեր ազդեցութիւն մը պիտի ընէր յիս :  
Մտքովս միայն կը հաւատամ այս բանին , վասն զի  
եթէ զգացմանցս հետեւէի , կարծեմ թէ Անկլիացի  
ծնած ատենս ալ բոլոր վշտացս պիտի կարենայի  
տոկալ : Մարմնով և հոգեով նոյնը կ'երեւակայեմ  
ինքզինքս , բայց լօռտ և հարուստ : Բոլոր ըղձերս ,  
բոլոր ունայնասիրութիւնքս պիտի յագենային : Եւ  
երբ այս վիճակը իմինիս հետ կը բաղդատեմ , ո՛հ ,  
յիմար կը դառնամ :

Սակայն շատ անգամ միտքս խորհուրդ մը կու-

գայ, բայց ինչ կրնան ընել խորհուրդները կրից  
 դէմ: Ահա. եթէ չըլլայի ինչ որ եմ հիմա, չի պի-  
 աի ապրէի, ուրիշ անձ մը պիտի ըլլար այն չէ թէ  
 ես: Իմ անհատական նոյնութիւնս պիտի ջնջուէր:  
 Ոչ ոք ինքզինքն ուրիշի մը հետ փոխանակել կ'ուզէ,  
 և ոչ ոք գոհ է ինքզինքէն: Ինչ հակասութիւն: Գոհ  
 լինիմք ինչ որ եմք: Քանի մտածեմ թէ փոփոխու-  
 թիւն պիտի կրեմ, այնքան կը տառապիմ, դեռ վը-  
 տացս այս աստիճանին չէի հասած: Ուրիշի մը վի-  
 ճակն ստանձնել եթէ երբէք կարելի լինէր, մեռնիլ  
 ըսել է ինձ համար: Մահը լոկ Եսին ջնջումն է: Բայց  
 ինչ կ'ընեմ: Ո՛րպիսի անյաղթելի մոլութեան մ' են-  
 թարկուած եմ: Ա՛հ, բարեկամս, քանի՛ մեր բնու-  
 թիւնը գննեմ, այնքան կը համոզուիմ որ, մենք՝ էու-  
 թեան կարեւոր մասունք մի ամբողջութեան՝ զոր  
 չեմք տեսներ, մեր խաղացած դերը օր մը պիտի  
 ճանչնամք: Եթէ հարցնէին ինձ, « Սատուծոյ էու-  
 թեան, հոգւոյ անմահութեան կը հաւատաս », կը  
 պատասխանէի, անխեղձ հարցումներ: Սատուած  
 կայ, որովհետեւ կարեւոր է, և ես կը կարծեմ թէ  
 մենք աշխարհի մէջ կը գտնեմք կեղծ, անցաւոր և  
 փոփոխական վիճակ մը: Ուրիշ տեղ մը գոյութիւն  
 ունեցած եմք, պիտի ապրի՞մք վերստին: Ինչպէս  
 կրնամք մեր սահմանափակ լեզուաւ և վարանեալ  
 մտօք մեծ Անծանօթին խորը մերկանալ: Ո՛հ, Սա-  
 տուած, Սատուած, ամեն ուրեք զինքը կը տեսնեմ:  
 Զանկկայ ճանչնալու և մեր բնութիւնը գուշակելու  
 տենչը, անհունութեան վրայ ունեցած նախազգա-  
 ցումներս, այս պղնձեայ պատուարը, անկարելիու-  
 թեան և արգիլման այս պատուարը՝ որոյ դէմ ոչ մի-  
 այն մեր դրութիւններն կը փչուին, կը խորտակուին,

այլ մինչեւ իսկ մեր սրտին իղձն ու եռանդը, այս  
 ամենը ինձ մի էակի գոյութիւնն կ'ապացուցանեն:  
 Ո՛չ, երկիրն չէր կրնար այսպիսի խառնեալ և տա-  
 րօրինակ էակներ յառաջ բերել տղմով միայն: Ա-  
 ւելի հեռուն երթալն անկարելի կը թուի ինձ: Կը  
 յուսամ և կը լռեմ: Միայն կ'զգամ թէ այս երկրիս  
 վրայ չարչարուողի մը նման վշտացս հետ կը մար-  
 տընչիմ: Այս վշտացս հատուցումն հո՞ս պիտի գըտ-  
 նեմ թէ այլուր: Չեմ գիտեր:

Այսօր վտերս այն աստիճան սաստկացած էին,  
 որ ընդհանրապէս ինձ սոսկում աղբողն հիմայ ան-  
 երկիւղութեամբ կը դիտեմ: Ո՛րքան տառապիմ, այն-  
 քան փառք, երջանկութիւն, ապագայ, այս ամենն  
 ալ անստոյգ և անտարբեր բաներ կ'երեւան աչ-  
 քիս: Ո՛հ, եթէ գիտնայիր թէ ինչ դժոխային թե-  
 լադրութիւնք կու գան խառնիլ ասոնց հետ: Ինչ  
 զարհուրելի խորհուրդներ կ'անցնին գլխէս, ինչ  
 տառապանք. գիտեմ որ դժբաղդ եմ: Հո՞ն է ամեն  
 ինչ: — Եւ ամենէն աւելի կը տանջուիմ, երբ կը  
 տեսնեմ որ կան մարդիկ՝ որոց բնութիւնը դէպ'ի  
 երջանկութիւն կը մղէ զիրենք: Եթէ ամենքն ալ  
 այսպէս նեղուէին, այն ատեն ընդհանուր հատու-  
 ցում մը, կեանքէն յետոյ արքայութիւն մը, անտա-  
 րակոյս պիտի թուէր ինձ: Բայց ինչ որ ալ ըսեն,  
 կը տեսնեմ որ երջանիկներ (բնութեամբ) կը գըտ-  
 նուին: Այսպիսիք ընդհանրապէս իրենց ապագան  
 չեն խորհիր, գոհ կ'ապրին առանց հեռատեսելու,  
 ամեն ինչ անոնց համար է: Մի՞ գուցէ թշուառու-  
 թիւնը դառն հիւանդութիւն մ' ըլլայ, մի՞ գուցէ  
 դժբախտներն անբուժելի վէրքերով շանթահարեալ

անձինք լինին , որոց ներքին կազմուածքը իրենց շարշարանք կ'ազդէ ինչպէս այլոց երջանկութիւնն : Այսու ամենայնիւ կը յուսամ և կը խոստովանիմ որ աշխարհային գործոց մէջ այն աստիճան աստուածային միջամտութիւն մը կը տեսնեմ , որ վերջապէս ինքզինքս անոր կը յանձնեմ : Խոնարհեմք գլուխնիս , բարեկամ : Առ ի՞նչ կը ծառայէ անկարելոյն դէմ մաքսուիլը : Շատ անգամ վշտերս լաւ մը զննելով , պաղ արեամբ կը դիտեմ գայնս , և սա դաղափարին կը յանդիմ<sup>1</sup> թէ բան մ' ընելու կարող չեմ :

Երկու ամիսէ 'ի վեր դարձեալ Անկլիերէնի աշխատիլ սկսայ , այնպիսի եռանդեամբ մը որ ոտանաւորները դիւրութեամբ կը կարդամ : Այժմ Ռուլան կ'ընթեռնում , հիանալի գիրք մ' է : Միտք ունիմ Անկլիա երթալ և քանի մը տարիէն յետոյ անոնց լեզուաւ գրել : Ժ. Լ.— որոյ հետ խիստ մտերմացած եմ , արդի Լճային (1) քերթողաց գործերը փոխ կու տայ ինձ : Հիանալի գրուածներ են : Քու Եփեսոսոգ միահատոր Պայռընի մը հետ փոխանակեցի : Մէջէն փոքր քերթուած մը կարդացի , Երուբ , որ շանթահար տպաւորութիւն մ' ըրաւ յիս : Անկլիացի կիին մը՝ ուսկից դաս կ'առնում , կ'ըսէ թէ երկու տարի եթէ յԱնկլիա կենամ , շատ աղւոր պիտի կարենամ գրել նոյն լեզուաւ , վասն զի , կ'ըսէ , քիչ Ֆռանսացի կայ որ ինձ նման Անկլիերէն գրէ : Արդարեւ՝ Լ.—էն գրեթէ անսխալ թարգմանութիւններ ըրի : Իրա՛ւ ալ է որ օրուանս կէսը Անկլիերէնի կը գտնեմ :

(1) Սկովաիայ մեծ լճերուն եզրերը բնակող կարգ մը բերթողաց այս անունը կու տային : ( Ծ. Թ. )

Միշտ մենամուտութիւններու տենդ ունիմ սաստիկ : Ի՛նչ տաղտուկ : Ռ'եր որ աչքերս դարձընեմ , վշտեր կը տեսնեմ : Ապրուստի միջոցս ալ տառապանք մ' է դարձած : Այժմ կենսագրութեամբ կը պարապիմ : Բայց ստակի պէտք ունիմ , այո՛ , սաստիկ նեղութեան մէջ եմ :

ի կ'

Եւ երբ խորհիմք թէ այս նամակը գրողը մեռաւ , անոր մէն մի տողին շուրջը բիւրաւոր խորհուրդք կը զեղուն :

Ի՛նչ գեղեցիկ վէպ , ի՛նչ պատմութիւն , ի՛նչ կենսագրութիւն քան զայս : Յիրաւի , մեր գործը չէ սովորական դարձած ստորնութիւնները կրկնել , մեր գործը չէ պահանջել՝ որ արհեստաւորին նկարած բոլոր տառապանքները նոյն իսկ արհեստաւորն ալ գգացած լինի . մեր աչաց չէ որ գէշ պիտի երեւի , երբ Պայռն եզերերգութեան մը մէջ կ'արտասուէ և զնդախաղի ատեն կը ծիծաղի . մեզ չի՛ վերաբերիր սահման դնել զրականութեան և այպանել ըզՔերթողն՝ որ այս կամ այն տեսակ վշտեր կը կրէ արհեստական կերպիւ , գողցես իւր ջղաձգութիւնը զննելու համար , ինչպէս բժիշկին այս կամ այն տենդը կը պատուաստէ , զայն իւր ցաւոց սաստկութեան մէջ դիտելու համար : Մե՛ք ամենէն լաւ կը ճանշնամք թէ ո՛րքան իրական , ճշմարիտ , գեղեցիկ և խորին են այն հոգեբանական զննութիւնք՝ զորս ժամանակակից երեւելի քերթողք կ'ընեն տարօրի-

նակ տառապանաց և եղական վիճակաց վրայ, և սակայն չեն մեռնիր: Բայց չենք կրնար առանց դիտելու անցնիլ թէ նամակին ամենէն կսկծեցուցիչ կէտն այն է, որ զայն գրողը մեռած է անկից: Սայն անձանցմէ չէ որք « կը տառապիմք » կ'ըսեն, այլ կը տառապի իսկ. անոնցմէ չէ որք « կը մեռնիմք » կ'ըսեն, այլ կը մեռնի' . . . : Մոմեղէն մարմնոյ մը կամ դիակի մը վրայ չէ որ կ'ընեմք մեր այս անդամազննութիւնը, այլ ջիւ առ ջիւ, նեարդ առ նեարդ, երակ առ երակ կը զննեմք մարմին մը, որ կ'ապրի, կ'արիւնի, կ'աղաղակէ: Եւ տեսնէ՛ք վէրքը, կը լսէ՛ք ճիշդ: Մատենագրական, փիլիսոփայական կամ բանաստեղծական նամակ մը չէ այս, խորիմաստ արհեստաւորի մը ձեռակերտ, հանճարի մ' արդիւնք, Հօֆմանի մը տեսիլ կամ Ժան—Բոլի դիւթ. ո՛չ, իրական բան մ' է սա, մարդ մը՝ որ իւր խցկին մէջ կը գրէ: Դեռ կը կարծեմ տեսնել զինքը իւր սեղանին առջեւ, Անկլիերէն գրքերով չըջապատուած, հոն են իւր գրիչը, մելանը, թղթերը, տող տողի վրայ կ'աւելցընէ, կը տառապի և կ'ըսէ թէ կը տառապիմ, կ'արտասուէ և կ'ըսէ թէ կ'արտասուեմ, տոմարին մէջ ամսաթիւը կը փնտռէ, ժամացոյցին վրայ ժամը, կը թողու նամակը, վերստին ձեռք կ'առնու, նորէն կը ձգէ զայն, ճրագը կը վառէ շարունակելու համար, յետոյ կ'երթայ ձաշել քսան փողի, տուն կը դառնայ ցրտահար, գրելու կ'սկսի, շատ անգամ ալ առանց գիտնալու թէ ի՞նչ է գըրածը, վասն զի վիշտը այնքան ցնցած են իւր ըզեղը որ ալ գաղափարները ցիր ցան կը թափթփիէ թղթին վրայ, ինչպէս ծառ մը իւր տերեւները հողմին սաստկութենէն:

Եւ եթէ ներելի ըլլար դիտել թէ ի՞նչ ոճով մարդ մը իւր օրհասական վայրկենին մէջ կը հեծէ, այս նամակին վրայ քանի մը դիտողութիւն կրնայինք ընել: Ընդհանրապէս նշանաւոր անձանց ամեն օրուան հրատարակած նամակներուն մէջ չի կայ ոչ պարզութիւն, ոչ անհոգութիւն, ոչ անկեղծութիւն: Ամենքն ալ օր մը հրատարակուելու մտօք գրուած են: Բօլ—Լուի—Քուռիէ՝ երկտող նամակ մը մինչեւ տասն և եօթն անգամ կը սրբագրէր, անչուտ տարօրինակ բան մը զոր չեմ կրցած ըմբռնել: Բայց Իմպէռ Կալլուաինը, ճշմարիտ նամակ մ' է ըստ մեզ: Նամակի մը համար կարեւոր եղած բոլոր յատկութիւնները կը պարունակէ իւր մէջ, վարանեալ, քայքայեալ, շատ թոյլ, հրատարակուելուն և ոչ իսկ յոյս մը ունի և ապահով է թէ օր մը պիտի կորսուի: Գաղափար մ' է այն՝ որ ըստ քմաց կ'արտայայտուի, որ մեզ կը ներկայանայ իւր բոլոր պարզութեամբ և թղթին վրայ կ'իյնայ առանց անոր ծալը խախտելու: Շատ անգամ զայն գրողը իւր միտքը յայտնելու տեղ և այնով մը գոհ կ'ըլլայ, և կը թողու որ երազեմք: Տառապեալ մ' է սա որ իւր ցաւերը մի ուրիշ մարդու կը յայտնէ: Ամենը այս է: Լաւ գիտեցէ՛ք, Քի Կոլի Դոլբու, և ոչ քսան, տասը՝ մինչեւ իսկ երկու մարդու, վասն զի եթէ բարեկամի մը տեղ երկու ունկնդիր միայն ունենար, գրածը նամակ մը չի պիտի ըլլար, այլ եղերերդ մը, գիրք մը: Ա՛լ պիտի թողուր անհոգութիւն, իրականութիւն և ճշմարտութիւն. ենթացողութիւնք պիտի յաջորդէին այս ամենուն: Պիտի ծածկուէր նա իւր ցնցոտեաց մէջ: Առանց Իմպէռ Կալլուաի չափ թըրուաւ ըլլալու, եթէ մէկն ուղեկնայ այսքան ան-

փոյթ , վշտալից , այսքան դեղեցիկ նամակ մը գրել մատենագրական ջանք մ' ընելով , պէտք է հանձարի տէր ըլլայ : Իմպէն կալլուա տառապեալ՝ Պայրըն կ'արժէ :

Այս ոճը՝ ունի ամեն ազդու , բնազանցական , և մտերմական յատկութիւններ , ունի նաեւ , որ նշանաւոր բան մ' է , կծու , նկարաւէտ , խայթիչ յատկութիւններ : Նամակին մէջ քանի մ' անձանց նկարագիրը կայ . ոմանք անապարանօք գրուած ըլլալուն , կը հասկցուի որ օրինակը հազիւ վայրկեան մը նկարողին դէմ մնացած է : Բայց քանի՛ ճշգրիտ են անոնք որ լաւ գծուած են : Ինչպէս ամենքն ալ լաւ 'ի հանդէս ելած են այնպիսի եղանակաւ մը՝ որ ամենուն տրուած չէ : Նորանշան փոփոխութիւն , որ բիւրերորդ անգամն ըլլալով կ'ապացուցանէ թէ երկու բան միայն զմարդ բանաստեղծ կ'ընեն , հանձար և կիրք : Այս մարդը որ կենսագրութեանց մասին՝ շատ ցամքած արձակ մ' ունի և եղբերդութեանց մասին՝ խիստ նուազաձայն երգեր , ահա սքանչելի կերպիւ կ'ոգեւորի նամակի մը մէջ : Երբ ա'լ մտքէն չանցնիր արձակագիր ըլլալ կամ քերթող , մեծ քերթող կը դառնայ և մեծ արձակագիր :

Գարձեալ կ'ըսեմք թէ այս նամակը պիտի մնայ : Յիդիքական և բարոյական ցաւերն իրարու խառնուելով , մարդկային ըղեղին մէջ ամենէն տարօրինակ գաղափարներու խառնուելու մը գոյացուցած են հոն : Անոնց համար՝ որք կը ճանչնային գիւպէն կալլուա , սոսկալի մեռելահատուցութիւն մ' էր սա , հոգեհատուցութիւն մը : Իւր հոգւոյն խորը գտնուածն այս նա-

մակն էր : Աղետաւոր և անպերջ նամակ՝ ուր վիշտը կը հոսի կաթիլ առ կաթիլ , ամբողջ շարաթներ , ամբողջ ամիսներ , ուր արիւնլուայ մարդ մը իւր արիւնիլը կը դիտէ , ուր հեծեծող մարդը իւր հեծեծանքը կը լսէ , ուր մէն մի խօսքի մէջ կաթիլ մ' արցունք կայ :

Երբ Իմպէն կալլուայի նման մէկուն պատմութիւնը կը գրեմք , իրաց կենսագրութիւնը պէտք չէ ընել , այլ գաղափարաց : Յիրաւի , այս մարդը չի գործեց , չի սիրեց , չապրեցաւ . այլ մտածեց . մտածեց միայն , և երազեց այնքան , մինչ վշտէն մարեցաւ : Իմպէն կալլուա այն նշանագրերէն է որք օր մը սա եղկելի և եղական խնդրոյն լուծմանը պիտի ծառայեն թէ՛ « գաղափար մը » որ չի կրնալով արտայայտուիլ , մարդուս զլսուուն մէջ բանտարկեալ կը մնայ , ո՞րչափ ժամանակի կարօտ է ըղեղ մը սպառելու համար » : Կը կրկնեմք խօսքերնիս , այս օրինակ կեանքի մէջ պատահար չի գտնուիր այլ լոկ գաղափար : Լուծեցէ՛ք գաղափարները , կեանքը պատմած կ'ըլլաք : Սկայն այս տխուր պատմութեան մէջ սա միայն կը նշմարուի թէ՛ մի խորհող եակ է որ Բըռատուցեմէն կը մտնի : Ահաւասիկ ինչ վիճակի հասուց փարիլ հանձարեղ քաղաքը՝ մի հանձար : Ասոր վրայ մտածելու է : Ընդհանրապէս մարդկային ընկերութիւնը տարօրինակ կերպով կը վարուի բանաստեղծներուն հետ : Ընկերութեան՝ անոր կենաց մէջ խաղացած դերը երբեմն կրաւորական է և երբեմն ալ ներգործական , բայց միշտ տխուր : Խաղաղ ժամանակներ՝ կը թողու որ մեռնին անոնք Մալթիաթուի նման , յեղափոխութեանց միջոցին՝ կը մեռցընէ գայնս՝ Անտուէ Շէնիէյի պէս :

Ըստ մեզ , իմպէտ կալլուա , լոկ իմպէտ կալլուա չէ , այլ խորհրդանշան մը : Արդի վեհանձն երիտասարդութեան մի նշանաւոր մասը կը ներկայացնէ նա մեր աչաց : Ի ներքուստ՝ այլոց անծանօթ հանճար մը կը լափէ գինքը , յարտաքուստ՝ ընկերութիւնը որ գէշ դիրքի մը մէջ է , կը խեղդէ զինքը : Ըղեղին մէջ փակեալ հանճարը ելքի շաւիղ մը չի գտներ , ընկերութեան տակ ձնչեալ մարդը ճամբայ չունի ազատութեան :

Կերկայիս մէջ ընդհանրապէս խորհող և տիրող անձինք խնամք չեն տանիր այն ուշիւմ երիտասարդաց՝ որք եռանդեամբ և անյողողոգ համբերութեամբ արհեստական ամեն ճիւղերու մէջ յառաջ կը նետուին : Այս դեռատի մտքերը՝ որ մթոյ մէջ ծածկուած կը մնան , ընդարձակ ասպարէզներու , օդոյ , լուսոյ , աշխատութեան և հորիզոնի պէտք ունին : Քանի՛ յաղթանակներ կրնար կանգնել մարդկութիւնը , եթէ ուզենար , այս հանճարներու բանակով : Քանի՛ ջրանցքներ կան բացուելիք գիտութեան մէջ , քանի՛ ճանապարհներ հարթուելու : Քանի՛ քաղաքներ կան արհեստից մէջ աշխարհակալուելու , քանի՛ աշխարհներ գտնուելու : Բայց ո՛չ , ամեն ասպարէզներն փակուած են կամ խափանուած : Թոյլ կու տան այսքան դործունեայ անձանց՝ որք օգտակար կրնային ըլլալ , երթալ , խրոնուիլ , դիպուիլ , խեղդուիլ նեղ ու անել փողոցներու մէջ : Կրնային բանակ մը ձեւացընել անոնք , այժմ՝ ժխոր մ՝ են լոկ : Ընկերութիւնը գէշ դիրքի մը մէջ է նորամտից մասին : Սակայն ամեն ոք միշտ իրաւունք ունի ասպագայ մը յուսալու : Յաւայի բան

չէ՞ արդեօք տեսնել բոլոր այս հանճարեղ մտքերը մթին ափանց վրայ դիպուած , նման Վիրգիլեայ ստուերներուն , աչքերին հեռո՛ւն դէպ 'ի լուսաւոր եգերքներ յառած , ուր փառք , փայլ , սիրճութիւն , պաախ և գանձեր կան կուտակեալ :

. . . . . Տխուր ճահիճը կ'ողողի ջրով ,  
Եւ Գեհէնն իւր մէջ խնոյը ըննիցս կը խորասուզէ :

Անծանօթ և թշուառ արհեստաւորին համար Գեհէնը գրավաճառն է որ ձեռագիրն առ նա վերադարձնելով՝ կ'ըսէ , « Գնա՛ համբաւ ստացիր » . թատրոնն է որ կ'ըսէ , « Գնա՛ համբաւ ստացիր » . թանգարանն է որ կ'ըսէ , « Գնա՛ համբաւ ստացիր » : Բայց Տէ՛ր Աստուած , թո՛յլ տուք որ նախ սկսին , օգնեցէ՛ք նոցա : Միթէ հոյակապ անձինքներն ալ անծանօթ չէի՞ն , և ի՞նչպէս հնար է նոցա՝ որչափ հանճար ալ ունենան , հուշակել իրենց անունը , երբ չի կայ թանգարան իրենց պատկերներուն համար , թատրոն՝ իրենց խաղերուն համար , գրավաճառ՝ իրենց գրքերուն համար : Բաւ չէ թռչունին թեւեր որ թիւ առնու , օդ պէտք է :

Մենք կարծեմք թէ արհեստի մէջ է նա մանաւանդ , յորում հանճարներն մի անշահախնդիր նըպատակ պէտք է ոգեւորէ , որ արդէն հասնողներն ճանապարհ հորդեն նոցա՝ ոյք կու գան : Գարին վերեւ էք , լաւ եւս , կարկառեցէ՛ք ձեռք նոցա՝ որք կը մագլցին : Ըսեմք 'ի փառս գրագիտաց թէ ընդհանրապէս այսպէս եղած է : Չեմք կրնար հաւատալ թէ արդարեւ կարենան գտնուիլ , որպէս կ'ըսեն , մատենագրական այնպիսի սարգեր ոյք իրենց ոս-

տայններն թատրոններու դրանց վրայ կը հիւսեն և անկարեկիր՝ կը յարձակին անանուն երիտասարդին վրայ որ կ'անցնի անտի, ձեռագիրը թեւին տակ, թէ այսպէս կը խլեն ճանճին թեւերը, համբաւը, դործը, մինչեւ իսկ ստակը անծանօթ և անզօր քերթողին, կ'ուզեմք իրաւի չի գիտնալ զայս 'ի պատիւ նոցա որք կը գրեն: Գալով այս տողերը գրողին, նուիրական է իրեն համար ամեն նոր սկսող բանաստեղծ: Որչափ ալ որ փոքր է իւր տեղն մատենագրութեան մէջ, բայց և այնպէս միշտ մէկ կողմ պիտի քաշուի ճամբայ տալու նորեկ բանաստեղծից: Ո՛վ գիտէ թէ սա խեղճ ուսանողը որ քեզ մօտ կեցած է, օր մը Շիլլէն չպիտի ըլլայ: Ըստ ինձ՝ ամեն դպրոցական որ պատին վրայ շրջանակներ ու բոլորակներ կը քաշէ, թերեւս Բասքալ մ' է: Ամեն տղայ որ աւազին վրայ ուրուագրելով կ'ըբօսնու, թերեւս շիօթօ մ' է:


Նաեւ ըստ մեր կարծեաց, արդի սերունդներն բարձր կոչմանց սահմանուած են: Այս դարս սրով մեծ գործեր կատարեց, գրչով ալ մեծ գործեր պիտի կատարէ: Դեռ կը մնայ իրեն մեզի տալ մի գրական մեծ մարդ հաւասար իւր քաղաքական մեծ մարդուն: Պատրաստեմք ուրեմն ճանապարհը: Տեղի տամք:

Ամեն մեծ թուական երկու երես ունի, ամեն մեծ դար, « + ք մ' է, դործող մարդ՝ յաւելեալ 'ի նա և խորհող մարդն՝ ոյք իրարմով կը բազմապատկուին և իրենց ժամանակին արժէքը կը ցուցնեն: Գործող մարդ՝ յաւելեալ 'ի նա խորհողն ըսինք,

քաղաքակրթութեան մարդ՝ յաւելեալ 'ի նա արհեստագէտ մարդ, լիւթը՝ յաւելեալ Շէյքսպիր, Ռեչիլիէօ՝ յաւելեալ Քոռնէյլ, Քոռօմէյլ, յաւելեալ Միլթըն, Նարոյնոն՝ յաւելեալ անձանօն: Թո՛յլ տըւէք ուրեմն որ անծանօթն ալ յայտնուի: Մինչեւ ցարդ դարուս մի կողմնադիծը և եթ ունիք, այն է Նարոյնոն, թողէ՛ք որ միւսն ալ յայտնուի: Յետ կայսեր՝ քերթողը: Այս դարս այն ատեն միայն լաւ պիտի ճանչցուի, երբ Ֆրանսական յեղափոխութիւնը՝ որ ընկերութեան մէջ Նարոյնոնի կերպարանօք մարդացաւ, արհեստից մէջ ալ մարդանայ: Եւ այս պիտի ըլլայ: Այս դարս ամբողջապէս գոգ մի շրջանակի մէջ փակեալ, 'ի հետուստ պիտի նշմարուի զուգահեռական սա երկու կենաց մէջէն, այն է զինուորական և մատենագրական. մին բոլորովին գործող միւսը խորհող որք զիրար պիտի մեկնեն ու յայտնեն: Մառէնկօ, Բուրգերն, Օսթէնլիմ, Մոսկուս, Մօնթըռօ, Վաթէնլու, ո՛րպիսի դիւցազներգութիւնք: Նարոյնոն իւր բանաստեղծութիւններն ունի. բանաստեղծն ալ իւր պատերազմները պիտի ունենայ: Թո՛յլ տամք ուրեմն որ գայ քերթողն և կրկնեմք այս աղաղակը անխոնջ կերպիւ: Թողումք որ ելլէ նա այն երիտասարդաց կարգին մէջէն, ուր գլուխն տակաւին մթոյ մէջ է ծածկուած, թողումք այո՛ այն ընտրեալը՝ որ, ըստ Նախախնամութեան գաղտնեաց, Նարոյնոնի հետ միանալով մի օր, տասն և իններորդ դարուն ընդհանուր խընդիրը պիտի լուծէ:







Հայաստանի Ազգային գրադարան



NL0429976

